



«ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ

ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43,  
հեռ. (37410) 294 728, ֆաքս՝ (37410) 294 728  
Էլ. փոստ՝ [Inbox@armrusgasprom.am](mailto:Inbox@armrusgasprom.am)

## Էական փաստեր և տեղեկություններ

2009թ. հունիսի 22-ին տեղի է ունեցել «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ժողովն ի գիտություն է ընդունել «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ 2008թ. ֆինանսատնտեսական գործունեության վերստուգման անցկացման մասին Ընկերության Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունը:

Հաստատվել են «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ 2008թ. տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը, «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ 2008թ. շահույթների և վնասների բաշխումը:

Հաստատվել է «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ կանոնադրության փոփոխություն N 2009-1-ը՝ կապված «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից «Իտերա Ինթերնեյշնլ Էներջի» ՍՊԸ-ին պատկանող «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ 2800000 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի ձեռք բերման և «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ-ի տրամադրության տակ գտնվող 9741151 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի մարման միջոցով «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ կանոնադրական կապիտալի նվազեցման հետ: Համաձայն այդ փոփոխության՝ «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ կանոնադրական կապիտալը բաժանված է 62997784 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 5026,5 ՀՀ դրամ անվանական արժեքով: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը պատկանում են 12600000 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, ինչը կազմում է կանոնադրական կապիտալի 20,00%-ը, իսկ «Գազպրոմ» ԲԲԸ-ին՝ 50397784 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, ինչը կազմում է կանոնադրական կապիտալի 80,00%-ը (հանձնարարվել է



## «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ

ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43,  
հեռ. (37410) 294 728, ֆաքս՝ (37410) 294 728  
Էլ. փոստ՝ [Inbox@armrusgasprom.am](mailto:Inbox@armrusgasprom.am)

կանոնադրության փոփոխություն N2009-1-ը ներկայացնել գրանցման ՀՀ Ձեռնարկությունների Պետական Ռեգիստր):

Ժողովում որոշվել է «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ 2008թ. գործունեության արդյունքներով շահութաբաժիններ չվճարել այն հիմքով, որ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 50.-ի կետ 1.-ի «ա» ենթակետի՝ Ընկերությունը իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը: Որոշվել է զուտ շահույթի օգտագործման հարցը դիտարկել «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընկերության կանոնադրական կապիտալի չվճարված մասի վերաբերյալ համապատասխան որոշում ընդունելուց հետո: